ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2020թ. թիվ 452-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշմամբ հաստատված կարգի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ, 66-րդ և 67-րդ հոդվածների պահանջները, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

Հաստատել ՀՀ Լոռու մարզպետարանի համակարգի առևտրային կազմակերպությունների 2019 թվականի գործունեության արդյունքներով 2020 թվականին ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 12
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. հունիսի 12-ի
թիվ 452-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ

1. «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի 2019թ. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 26500 դրամ զուտ շահույթի 50% կազմող 13250 դրամը վճարել ՀՀ պետական բյուջե՝ որպես շահութաբաժին, իսկ մնացած մասն ուղղել սպառողական ֆոնդին:
2. «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի 2019թ. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 784000 դրամ զուտ շահույթի 50% կազմող 392000 դրամը վճարել ՀՀ պետական բյուջե՝ որպես շահութաբաժին, իսկ մնացած մասն ուղղել սպառողական ֆոնդին:
3. «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ի 2019թ. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 28400 դրամ զուտ շահույթի 50% կազմող 14200 դրամը վճարել ՀՀ պետական բյուջե՝ որպես շահութաբաժին, իսկ մնացած մասն ուղղել սպառողական ֆոնդին:
4. «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի 2019թ. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 12600 դրամ զուտ շահույթի 50% կազմող 6300 դրամը վճարել ՀՀ պետական բյուջե՝ որպես շահութաբաժին, իսկ մնացած մասն ուղղել սպառողական ֆոնդին:
5. «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2019թ. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 21815600 դրամ զուտ շահույթի 50% կազմող 10907800 դրամը վճարել ՀՀ պետական բյուջե՝ որպես շահութաբաժին, իսկ մնացած մասն ուղղել սպառողական ֆոնդին:
6. «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2019թ. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 10073000 դրամ զուտ շահույթի 50% կազմող 5036500 դրամը վճարել ՀՀ պետական բյուջե՝ որպես շահութաբաժին, իսկ մնացած մասն ուղղել սպառողական ֆոնդին:
7. «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի 2019թ. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 675000 դրամ զուտ շահույթի 50% կազմող 337500 դրամը վճարել ՀՀ պետական բյուջե՝ որպես շահութաբաժին, իսկ մնացած մասն ուղղել սպառողական ֆոնդին:
8. «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի 2019թ. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 14300 դրամ զուտ շահույթի 50% կազմող 7150 դրամը վճարել ՀՀ պետական բյուջե՝ որպես շահութաբաժին, իսկ մնացած մասն ուղղել սպառողական ֆոնդին:
9. «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի 2019թ. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 1233800 դրամ զուտ շահույթի 50% կազմող 618400 դրամը վճարել ՀՀ պետական բյուջե՝ որպես շահութաբաժին, իսկ մնացած մասն ուղղել սպառողական ֆոնդին:

10. «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2019թ. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 4496000 դրամ զուտ շահույթի 50% կազմող 2248000 դրամը վճարել ՀՀ պետական բյուջե՝ որպես շահութաբաժին, իսկ մնացած մասն ուղղել սպառողական ֆոնդին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Invalid signature

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ